Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

29.09.2022 թ. № 1 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

_____Կ. Վ. Հարությունյան

«ՀԱՅԼԻՆԳՎՈՏԵՔ» ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ներածություն

Ժամանակակից գիտատեխնիկական զարգացումները թելադրում են բարձրագույն կրթության բովանդակության և կազմակերպման ձևերի վերանայում ուսումնառության վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների, ՄԿԾ-ների արդյունավետ իրացման համար նյութատեխնիկական միջոցների արդիականացման, աշխատաշուկայի հետ ամուր կապերի ստեղծման, նորարարությունների ներդրման և այլ առումներով: Գիտելիքահենք տնտեսության ստեղծումը առաջնահերթ է դարձնում բարձրագույն կրթության գործընթացում հետազոտության և ուսումնառության միավորումը, ինչը հնարավորություն կտա պատրաստել համապատասխան տեսական գիտելիքներով, գործնական հմտություններով և կարողություններով մասնագետներ, որոնք մրցունակ կլինեն ոչ միայն Հայաստանի, այլև միջազգային աշխատաշուկայում:

Հայաստանի Հանրապետության բուհերում առաջարկվող ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ընդլայման և տեխնոլոգիահենք կրթության անհրաժեշտությամբ է պայմանավորված գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծումը, ինչը փորձ է արվում իրականացնել Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանում «Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի ստեղծում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է հիմնել գերազանցության կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն) իր տեխնոպարկով՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, գույքով և ծրագրային փաթեթներով:

Կենտրոնի ստեղծման առաջնային նպատակն է ապահովել հետազոտությունների իրականացման համար հարթակ բնական լեզվի մշակման և թեստավորման ոլորտներում՝ մասնավորապես կենտրոնանալով հայերենի թվայնացման՝ հայերեն թվային ծրագրակազմի ստեղծման խնդիրների վրա: Հայերենը ներկայումս գտնվում է ոչ շահեկան վիճակում, քանի որ, օրինակ, բացի «Արևելահայերենի ազգային կորպուսից», առկա չեն թվային մեծածավալ ծանոթագրված մասնագիտացված կամ երկլեզու/զուգահեռ լեզվական կորպուսներ, որոնք կարող են կիրառվել և հետազոտական, և ուսումնական

նպատակներով: Ստեղծված չեն նաև հայերեն պաշտոնական կամ առօրյա բանավոր խոսքի կամ մանկան խոսքի կորպուսներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել հայերեն նյութի հանրալեզվաբանական կամ հոգելեզվաբանական ուսումնասիրություններ, ինչն էլ հանգեցրել է նրան, որ հայերենը՝ որպես հաղորդակցման միջոց, լիարժեք ուսումնասիրված չէ: Դեռևս ստեղծված չեն մի շարք ծրագրեր, ինչպես, օրինակ, հայերեն տեքստերի սրբագրման գործիք, կամ Գուգլ որոնողական համակարգում տառասխալով գրված բառի կամ բառակապակցության ճանաչում, բանավոր տեքստի ավտոմատ ճանաչում, ինչը հայերենի կիրառումը թվային ենթակառուցվածքներում կդարձներ լիարժեք:

Սույն հայեցակարգի նպատակն է սահմանել «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի և տեխնոպարկի զարգացման տեսլականը, առաջադրված նպատակներն ու խնդիրները, իրականացման փուլերը:

Կենտրոնի առաքելությունը և տեսլականը

Կենտրոնի **առաքելությունն** է ապահովել որակյալ մասնագետների համար գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու բավարար պայմաններ՝ ստեղծելու մրցունակ հավելյալ արժեք՝ գիտական արտադրանք:

«ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի զարգացման **տեսլականն է** դառնալ՝

- որակյալ մասնագետներով և նյութատեխնիկական բազայով ապահովված կենտրոն, որը ԲՊՀ-ում կապահովի կրթության և հետազոտության կապը՝ նպաստելով տեխնոլոգիահենք կրթության ներդրմանը, միջգիտակարգային հետազոտությունների խթանմանը,
- ՀՀ-ում և արտերկում ճանաչված, մրցունակ գիտահետազոտական կենտրոն, որտեղ ստեղծված հավելյալ արժեքը՝ գիտական արտադրանքը, հնարավոր է առևտրայնացնել և ծառայեցնել ՀՀ տնտեսության զարգացմանը, մասնավորապես՝ հայերենի լիարժեք թվայնացմանը և ծրագրակազմերի ստեղծմանը:

Կենտրոնի նպատակը

Կենտրոնի գործունեության **նպատակն** է իրականացնել գիտահետազոտական և նորարարական աշխատանքներ հումանիտար ու սոցիալական գիտությունների և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների միջգիտակարգային ոլորտներում՝ նպաստելով տեխնոլոգիահենք կրթության զարգացմանը և խթանելով կրթություն-հետազոտություն-նորարարություն-բիզնես կապը:

Կենտրոնի գործունեությունը

Զարգացման գործողությունների ծրագիրը ուղղված է հիմնական նպատակի իրականացմանը՝ կրթություն-հետազոտություն-նորարարություն-բիզնես կապի ստեղծմանը, ինչը ենթադրում է աշխատանքի կազմակերպում մի քանի ուղղություններով, որոնք սերտորեն փոխկապակցված են, քանի որ ժամանակակից կրթությունը մեծապես

հիմնվում է գիտահետազոտական աշխատանքի արդյունքների վրա, իր հերթին գիտահետազոտական աշխատանքի նպատակը նորարարական գիտական արդյունք ստեղծելն է, որը հնարավոր է առևտրայնացնել բիզնես ոլորտի ֆինանսավորմամբ և դրա հետ համագործակցությամբ:

«ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնը ապահովելու է **կրթություն-հետազոտություն** կապը հետևյալ գործողությունների իրականացմամբ՝

1. Կենտրոնը համալրել համապատասխան մասնագետներով, որոնք կիրականացնեն հստակ ուղղություններով աշխատանք, ինչպես, օրինակ, շարահյուսական ծառերի մշակում, իմաստային ծառերի փորձնական մոդելների, փոքրածավալ կորպուսների ստեղծում, որոնք անհրաժեշտ հենք են «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական ՄԿԾ-ի արդյունավետ իրացման համար,
2. ներգրավել ԲՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմին Կենտրոնի աշխատանքներում և կազմակերպել վերապատրաստման ծրագրեր՝ միտված տեխնոլոգահենք կրթության ներդրմանը, միջգիտակարգային հետազոտությունների իրականացմանը և տարբեր ՄԿԾ-ներում դրա արդյունքների ինտեգրմանը, ինչը մեծապես կնպաստի ԲՊՀ-ում գիտահետազոտական գործունեության ակտիվացմանը:
3. մշակել «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական կրթական ծրագրի ուսումնական և արտադրական պրակտիկայի համապատասխան հանձնարարականներ՝ տվյալ ՄԿԾ-ի պատասխանատու ամբիոնի և Կենտրոնի աշխատանքային խմբերի համագործակցությամբ,
4. ստեղծել «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական կրթական ծրագրի կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների բանկ՝ Կենտրոնում նախագծված հետազոտական ուղղությունների՝ մշակված շարահյուսական ծառերի, իմաստային ծառերի փորձնական մոդելների, փոքրածավալ կորպուսների շրջանակում,
5. մշակել «Հաշվողական լեզվաբանություն» մագիստրոսական կրթական ծրագիր՝ հիմնվելով Կենտրոնի արդեն ձևավորված մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների վրա,
6. Կենտրոնը ծառայեցնել ԲՊՀ-ի կողմից առաջարկվող այլ ՄԿԾ-ների որակի բարելավմանը՝ խթանելով կուրսային, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հետազոտական բաղադրիչի ընդլայնումը և ՄԿԾ-ներում հետազոտական արդյունքների ինտեգրումը, ինչին կարելի է հասնել մասնագիտացված կորպուսների ստեղծմամբ, որոնք կապահովեն տեսական և կիրառական հետազոտության համար համապատասխան լեզվական նյութ:
   - «Թարգմանչական գործ» բակալավրական կրթական ծրագրի շրջանակում կարող են արդյունավետորեն կիրառվել երկլեզու մասնագիտացված կորպուսները և՛ ուսումնական պրոցեսում, և՛ հետազոտական նպատակներով: Ընդ որում, այդ կորպուսների ստեղծմանը կարող են նպաստել ոչ միայն «Հաշվողական լեզվաբանություն», այլև «Թարգմանչական գործ» մասնագիտության ուսանողները՝ իրենց մասնագիտական պրակտիկան անցնելով Կենտրոնում:

- «Լեզվաբանություն» և «Մասնագիտական մանկավարժություն» մագիստրոսական և բակալավրական ծրագրերի շրջանակում կարող են ստեղծվել և կիրառվել համապատասխան կորպուսներ, որոնք հնարավորություն կընձեռեն իրականացնելու հետազոտություններ ճանաչողական լեզվաբանության, հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության, նեյրոլեզվաբանության ոլորտներում, ինչը մեծապես կնպաստի ԲՊՀ-ում գիտահետազոտական ներուժի ընդլայնմանը և որակյալ հետազոտական աշխատանքների իրականացմանը:
- Կենտրոնի հնարավորությունները կարող են օգտագործվել նաև ԲՊՀ այլ ծրագրերում՝ «Քաղաքագիտություն», «Զբոսաշրջություն», «Սերվիս» և այլն, մասնավորապես՝ տվյալ ոլորտի խոսույթի առանձնահատկությունների ուսումնասիրության շրջանակում մասնագիտացված կորպուսների միջոցով անհրաժեշտ լեզվական նյութի տրամադրմամբ:

7. մշակել և կիրառել հայերենի իմացության մակարդակների ստուգման և գնահատման՝ օտար լեզուների իմացության միջազգայնորեն կիրառելի թեստային համակարգերին (TOEFL, IELTS, DELF և այլն) համադրելի գործիքակազմ:

Հետազոտություն-նորարարություն կապը կձևավորվի հետևյալ ուղղություններով գործողությունների իրականացմամբ՝

1. համագործակցել «Արևելահայերենի ազգային կորպուսի» ստեղծման աշխատանքային թիմի հետ՝ նպաստելով տվյալ կորպուսի հետագա զարգացմանը կամ մասնագիտացված նոր կորպուսների ստեղծմանը,
2. Կենտրոնի հենքի վրա ստեղծել փոքր լաբորատորիաներ, որոնք կոնկրետ լեզվաբանական ոլորտներում՝ հնչյունաբանական, իմաստաբանական, շարահյուսական, ուսումնասիրություններ կիրականացնեն՝ ծրագրավորողների հետ ստեղծելու կամ բարելավելու հայերենի թվայնացման տարբեր ենթակառուցվածքներ՝ հայերեն տեքստի սրբագրում, բանավոր տեքստի ավտոմատ ճանաչում, հայերեն տեքստերի ավտոմատ մշակում, մեքենական թարգմանություն, բառարանագրություն և այլն՝ նպաստելով կրթություն-գիտություն-տնտեսություն կապի խորացմանը և ստեղծված գիտական արդյունքի առևտրայնացմանը,
3. ստեղծել հետազոտական թիմ կամ թիմեր՝ «Հաշվողական լեզվաբանություն» մասնագիտության շրջանավարտների մասնակցությամբ, որոնք, աշխատելով վերոնշյալ լաբորատորիաներում, կարող են՝
    - դիմել պետական կամ միջազգային դրամաշնորհային ծրագրերի՝ բնական լեզվի ավտոմատ մշակման ոլորտում հետազոտական նախագծեր իրականացնելու համար,
    - ստեղծել համագործակցային ցանց սահմանափակ տարածում ունեցող լեզուների թվայնացմամբ զբաղվող թիմերի հետ և իրականացնել համատեղ ծրագրեր,
    - իրականացնել համատեղ հետազոտական ծրագրեր «Հաշվողական լեզվաբանություն» կրթական ծրագիր և համապատասխան գիտաուսումնական

կամ գիտահետազոտական լաբորատորիաներ ունեցող արտասահմանյան առաջատար համալսարանների հետ:

Գիտելիքահենք տնտեսության զարգացումը ենթադրում է բարձրագույն կրթական հաստատությունների սերտ համագործակցություն պետական, հանրային և մասնավոր ոլորտների համապատասխան կազմակերպությունների հետ: Այդ կազմակերպությունների համար շահեկան կարող է լինել բարձրագույն կրթական հաստատություններում գործող գիտահետազոտական կենտրոնների ֆինանսավորումը՝ իրականացնելու նորարարական գիտահետազոտական ծրագրեր: **Նորարարություն-բիզնես** կապի ստեղծումը նպատակահարմար է սկսել կրթական ոլորտից, այնուհետև տեղափոխել գիտահետազոտական ոլորտ՝ կարևորելով ներքոնշյալ գործողությունները՝

ստեղծել համագործակցային ցանց ՀՀ-ում գործող այն կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են արհեստական բանականության և մեքենական ուսուցման, բնական լեզվի ավտոմատ մշակման խնդիրներով: Համագործակցության շրջանակում հնարավոր է՝

- որպես համագործակցության առաջին քայլ կազմակերպել սովորողների արտադրական պրակտիկան այդ կազմակերպություններում,
- ներգրավել տվյալ կազմակերպությունների մասնագետներին կրթական գործընթացում՝ որպես դասախոսներ, պրակտիկայի ղեկավարներ, ավարտական աշխատանքների համահեղինակներ,
- ներկայացնել ոլորտի կազմակերպություններին Կենտրոնում իրականացված հետազոտությունները և ստանալ նրանց կարծիքը, հետագայում նաև աջակցությունը՝ գիտական արդյունքի առևտրայնացման հարցում,
- համատեղ բարելավել առկա ծրագրակազմերը կամ մշակել և առևտրայնացնել նոր ծրագրակազմեր,
- ոլորտի կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ իրականացնել նորարարական նախագծեր և առևտրայնացնել ստեղծված գիտական արդյունքը:

Վերոնշյալ գործողությունների արդյունավետ իրականացմամբ Կենտրոնը կարող է դառնալ հավելյալ արժեք ստեղծող մրցունակ գիտահետազոտական կենտրոն, որը մեծ ներդրում կունենա ՀՀ-ում տեխնոլոգիահենք կրթության կայացման գործում: